



129. ՍԱՄ

Ժամանակով մի թաքավոր ա ըլում, էտ թաքավորին ժառանգ շի ըլում: Շատ ա մտածում գա ժառանգի համար: Օրերից մի օր էթրմ ա իրա խաս-բախչեն պըատվելու, տենում ա որ մի օձ ճուտեր է հանե, ճուտերի վրին նստել ա ու մեկին գրել ա աղաքին ու լիզըմ ա: Թաքավորը էտ բանը տենում ա, ասըմ ա. «Փա՛ռք քեղ աստված, թող մի օձի ճուտ էլ ինձ ըլեր՝ ես էլ դրա պես լիզեի»:

Թաքավորի էտ խոսքի վրեն մի դարվիշ ա պատահում:

— Հա՛,— ասըմ ա,— թաքավոր, ի՞նչ ես մտածում:

Ասըմ ա.— Ջանիդ սաղություն, դարվիշ բաբա:

Դարվիշն ասըմ ա.— Չըլնի՞ տղա չունես:

— Հա,— ասըմ ա,— չունեմ, դարվիշ բաբա:

— Դե,— ասըմ ա,— որ ըտենց ա, առ էս խնձորը, կտանես քու տունը, դանակով կլեպը վեկալնես, կը կիսես, կեսը դու կուտես, կեսը կտաս թաքուհուն, ընրա կլեպներն էլ, ձեզ մի հատ դսրաղ ունեք, նա էլ շի բերըմ, էն էլ կը տաք դսրաղին: Իննը ամիս, իննը օր, իննը սհաթ որ անցնի, թաքուհին մի տղա կը բերի, ու ձին էլ մի քուռակ կը ցկնի: Ո՛չ տղին անում դնես, ո՛չ քուռակին, ինչար որ ես գամ:

Թաքավորը խնձորը վերունում ա, տանում ա տուն, կուրպում ա, կեսը տալիս ա թաքուհուն, կեսն էլ ինքն ա ուտում. կլեպն

էլ տալիս էն ձիուն: Քաշըմ ա իննը ամիս, իննը օր, իննը սհաթ, իննը րոպեից ետը թաքավորի կնիկը ազատվում ա ու մի ոռկեքլաքլու տղա ա բերում: Ձին էլ ցկնում ա՝ մի լավ քուռակ ա բերում: Էտ թաքավորի կարգն էլ էն ա, որ էրեխին պտի թեզ կնքի: Շատ ա դարվիշի ճամփեն պահում, տենում ա որ շէկավ, էրեխեն դառնում ա վեց-յոթ տարեկան: Օրերից մի օրը թաքավորի վազիր-նազիրը թաքավորին ասում են.— Թաքավորն ապրած կենա, բոլ շի՞ քու բեխեն մնա առանց կնունք. բերեք կնքենք, դարվիշը ի՞նչ ա:

Թաքավորն ըտրանց լըսում ա, մեծ պատրաստություն ա քաշըմ, բերում ա էրեխին կնքում: Հլա էրեխեն շուրը դրած էր՝ մեկ էլ տեսան դարվիշը մտավ նեքսև.— Հը՛, թաքավոր, խոսքիդ տեր շէիր:

Թաքավորը կանչում ա դարվիշին.— Համեցե՛ք, համեցե՛ք, դարվիշ բաբա:

Դարվիշը ասում ա.— Ծս գալու վախտ շունեմ, բայց տղի անումը կը դնեք Սամ, ձիու քուռակին էլ՝ Աթմի-թուրաբ՝, — ասում ա ու անհայտանում: Մեկ էլ տենում են, որ դարվիշ բաբան շկա: Տղի կնունքը վերջացնում են, թաքավորը տղին տալիս ա ուսումի: Մի քանի տարի կարդալուց եղը՝ տղեն մենձանում ա, մի օր ուղըմ ա, որ ձի նստի էթա ման գալու: Թաքավորին ասում ա.— Մի ձի տու, նստեմ գնամ ավղուշ:

Թաքավորն ասում ա.— Գնա նստի՛ որը կուզես:

Սամը էթըմ ա մի փիս ձի ա նստում ու էթըմ ա սարո ման գալու: Շատ ա ման գալի, քիչ՝ տենում ա մի քուլի տակից մի շեյրան դուս էկավ, էկավ տվեց տղի ձիու փորի տակովն ու գնաց:

Տղեն ասեց.— Էս ինչ լավ բան էր, ես պտի ըստրան բռնեմ:

Ձին դարձրեց ու ըտրա հետեից քշեց: Շատ գնաց, քիչ հետեից՝ ձին բեզարեց, դարձրեց ձին էկավ տուն: Էկավ տուն ու մեհթարների վրեն բարկացավ, ասեց.— Էս ինչ ձի էր, որ տվիք ինձ, մի լավ ձի տվեք, որ առավոտը ես էթամ սարը, թե չէ, գլուխներդ կը կտրեմ:

Մեհթարները իրանց ահու ասեցին.— Սա՛մ, մի ձի կա, որ քու հետ ա ըլե, մենք ընտրան շենք կարըմ մոտ էթա, թե դու կարաս՝ արի գնա բե, նստի ուր ուզես գնա: Ընտրա ձեռիցը բան չի պրծնի:

Սամը ասեց.— Դե, տեղը շանց տվեք:

Մեհթարները տարան աղին ընցրին գոմը, տղեն գնաց ձիուն

¹ Թրի պես կտրող ճանապարհ—Մ. Բ.:

րոնեց, քաշեց դուռը, մի թաթարի թիմար տվեց, մի լավ թամբ բերեց դրեց ձիու վրա ու նստավ գնաց: Գնաց հասավ սարը՝ էն տեղը որ տեհավ, էլ էն ջելրանը դուրս էկավ: Ձին քշեց հետևից: Շատ քշեց, քիչ՝ ձին ըսկի վեջը չէր, ջելրանին տարավ հանեց մեջը, մի տուն մտցրեց: Սամը ձին կապեց դռանը ու մտավ նեքսե, տեհավ մի սիրուն ախշիկ նստած: Ասեց.— Իմ ջելրանը տվեք:

Ախշիկն ասեց.— Արի ըստի, քու ջելրանը ես եմ: Թե որ ինձ հավանք մը Լս՝ ես քու ջելրանն եմ, եթե չէ՝ էլ ուրիշ չկա:

Տղեն ասեց.— Որ ըտենց ա՝ ես քունն եմ, դու իմն ես:

Տղեն դնաց ախշկա կուշտը նստեց, շատ խոսեցին, քիչ՝ ախշկա բունը տարավ, գլուխը դրեց տղի ծնկին ու քնավ: Տղեն ախշկա մաղերի հետ խաղ էր անում, մեկ էլ տեսավ մաղերի միջից մի պնալիք դուս էկավ: Պլանիքը վեկալավ, ախշկա գլուխը ծնկից վե դրեց ու վեկացավ տան մեջ ման էկավ: Գնաց մի դուռ բաց արեց, տեհավ ըտեղ մի նկար կա, որ տեհավ. «Օ՛,— ասեց,— ես էս նկարի տերը պտի գտնեմ»: Վեկալավ գրեց ծոցը, դուրս էկավ նստավ ձին ու քշեց դըբա ուրիշ երկիր:

Խարարը տանք ախշկանից: Ախշիկը վեկացավ, տեհավ, որ նկարը վեր ա կալե ու գնացե: Դառավ մի հատ աղունիկ, ասեց. «Որ ես էտ տղին չգտնեմ՝ կը գժվեմ»: Թուավ գնաց տղի հետևից: Գնաց տեհավ տղեն նստել ա մի աղբրի վրա, հանգստանք մա, էտ աղունիկը կայնավ մի ծառի գլխի ու բանցր ձենով ասեց.— Սա՛մ, դու գիժ մի լի, դու արի ինձ առ, ես կէթամ նկարի տերը կը բերեմ, նա ըլի խանք, ես ըլեմ ղարավաշ, բալքի իմ փափաքը քեզանից առնեմ:

— Ձէ՛,— ասք մա Սամը,— չեմ առնի, առնողներից էլ չեմ:

Ու նստում ա ձին ու քշում: Մի երկու երեք անգամ ըտենց աղունիկը պտահում ա, տղին շատ ա խնդրք մտղեն չի հոժարվք:

Շատ ա էթք մա, քիչ՝ հասնք մա մի թաթարի քաղաք: Էթք մա մի պառավի տուն, դոնաղ ա ըլք մա: էտ պառավը բերք մա էտ տղին պատվք մա, տղեն հանք մա նկարը ծոցից պառավին շանց ա տալի, ասք մա.— Նանի՛, էս նկարի տերը որդի՛ կըլի:

Պառավը որ տենք մա՝ ձեռաց ճանանք մա, որ իրանց թաթարի ախշիկն ա:

— Ա՛յ,— ասք մա,— բալա ջան, էտ նկարի տերը չես կարա առնի: Որ էտ ախշկա անք մա հանես քեզ հմար առնելու՝ ընտրա հէքք քու գլուխը կտա:

— Նանի՛,— ասք մա,— վեկաց գնա էտ ախշիկը ուզա, ինչ կըլնի՛ կըլնի:

Պառավն ասում ա.— Կէթամ բալա ջան, բայց դու ափսոսս ես:

— Դու գնա իմ հմա ուզի, մի մտածի:

Պառավը վեր ա կենում, էթում ա:

էթում ա թաքավորի խնամաքարին նստում: Թաքավորը պառավին տենում ա, ասում ա.— էտ պառավը գծվե՞լ ա,— ասում ա,— հլա՛ կանչեք իմ կուշտը, ես ըտրան լավ խնամի կը դարձնեմ: Իմ ախշիկ ուզողը իրա մոր փորից չի դուրս էկե:

Պառավին կանչում են, տանում են թաքավորի կուշտը. գլուխ ա տալիս, կայնում:

— Հը, ի՞նչ կա, պառա՛վ,— հարցնում ա թաքավորը:

— Թաքավորն ապրած կենա, էկե՛լ եմ քու ախշիկը ուզեմ իմ տղին:

— Լա՛վ,— ասում ա,— տղիդ կանչա, գա:

Պառավը էթում ա, տղին բերում ա: Ընչար պառավի բերեալ թաքավորը հնարքներ ա գտնում՝ տղին ընենց տեղ ղրգի, որ էթա, ետ չգա:

Տղեն գալիս ա, թաքավորն ասում ա.— Դո՞ւ ես իմ ախշիկը ուզում:

— Հրամա՛նք, ես եմ:

— Դե որ դու ես՝ քեզ էլ կտամ, բայց մեր թաքուհին հիվանդ ա, կարա՞ս էթաս անմահական հազող բերես, մեր թաքուհին ուտի, լավանա, նոր ախշիկս կտամ քեզ, թե չէ՝ գլուխդ կը կտրեմ:

Տղեն ձին նստում ա ու էթում:

Շատ ա էթում, քիչ՝ հասնում ա օխտ ճամփի արանք, տենում ա մի հալեվոր մարդ նստած ա:— Բարև քե՛զ,— ասում ա,— պապի՛:

— Բա՛րև, ասու բա՛րին, բալա ջան:

— Պապի՛, անմահական հազողը ո՞րդի կրլի:

— Ա՛յ քու դրգողի մեջքը կոտրվի,— ասեց:

Հալիվորը տեղը շանց տվեց, ասեց.— Կէթաս կըմտնես, բաղից կը քաղես, առանց խոսալ ետ կը դառնաս, կը դաս: Քար ու թուփ բռռան՝ ետ թամաշ չանես, թե չէ՝ քար կը դառնաս:

— Շատ լա՛վ,— ասեց ու քշեց:

Գնաց մտավ բաղը, հազող քաղեց, ձիու խուրչինները լցրեց ու ետ դառավ, էկավ:

Ետևիցը քար ու թուփ գողում են.— Տարա՛վ, հա տարա՛վ:

Տղեն ետ թամաշ չարեց: Հազողը բերեց թաքավորին տվեց: Թաքավորը, որ տեհավ տղեն էկավ, նորից սկսեց ուրիշ հնարքներ գտնելը:

Բերեց, թաքուհին կերավ հազողը, մնաց էքսի օրը թաքուհին՝
լավացավ, որ աղին պտի նշան դնեին, նորից էլի թաքուհին տըքաց։
Կանչեցին տղին, — Սամ ջա՛ն, — ասեց թաքուհին, — որ չէթաս-
Սիպտակ դեի սիրտն ու թոքը բերես՝ ուտեմ, շեմ լավանա։

Տղեն նորից տխուր-տրտում վե կացավ գնաց։

Շատ դնաց, քիչ՝ հասավ հալիվորին։

Հալիվորը հարցրեց. — Ա՛յ տղա, էլի էտ ո՛ւր ես էթում։

— էթում եմ Սիպտակ դեի սիրտն ու թոքը բերեմ։

Վա՛յ, քու զորգողի մեջքը կոտրվի, — ասեց, — ընտի էթողը-
ետ չի դալի։ Դու էն քառասուն դլխանու սիրտն ու թոքը ո՞նց պտի
բերես։

— Բա, — ի՞նչ հնարքով կը բերվի, պապի՛։

— Նա, — ասեց, — ապրում ա Սև ծովի, Սիպտակ ծովի արան-
քը, էտ ծովի մեջը մի հատ ձի կա, Լեյլո անըմով, ընրա գամը ծովի
դրաղը՝ մի սիպտակ քարի տակ ա, որ էթաս գամը հանես, կանչես-
«Գամի տե՛ր», նա կը գա, կասի. «Ի՞նչ ա մուրազդ, սոսա՛ կատար-
եմ»։ Դու կասես. «Ես քեզանից ուզում եմ Սիպտակ դեի սիրտն ու
թոքը»։

Տղեն շնորհակալութուն հայտնեց ու գնաց։ Շատ գնաց, քիչ՝
հասավ ծովին, ման էկավ սիպտակ քարը գտավ, քարը շուռ տվեց,
դամը տակից հանեց, կանչեց. «Գամի տեր», Լեյլոն ծովից դուրս
էկավ, առաջը կայնավ։ Ասեց. — Ի՞նչ ա մուրազդ, սոսա կատարեմ։

Ասեց. — Քեզնից ուզում եմ Սիպտակ դեի սիրտն ու թոքը։

Տո՛ւ, — ասեց, — դեը սաղլամ կը բերեմ, արխեի՛ն կաց։

Սամը նստեց Լեյլոյին ու թռավ գնաց։ Գնաց հասավ Սև ծովի,
Սիպտակ ծովի արանքը։ Դեը որ հեռվից տեսավ. — Օ՛հ, — ասեց, —
էս ի՞նչ հողածին ա, էթամ ըտրան ուտեմ։

Դեը որ տղին մոտացավ, տեսավ որ Լեյլոյին նստած դա-
խրան ա գալի, դեի շոքերը դողաց Լեյլոյի ահից։ Տղեն մոտեցավ,
Լեյլո ձին լեզու էլավ, տղին ասեց. — Պարանը դիր դեի շլինքը ու
քաշիր, նա իմ հետևից կը գա։

Լեյլոն էտ մի դեռվ շոքացավ, ասեց. — Պտի էթամ Սև ծովի,
Կարմիր ծովի դեերին էլ բռնեմ։

Գնաց հասավ Սև ծովին։ Սև դեը, որ Լեյլոյին, Սամին ու Սիպ-
տակ դեին տեսավ, ահից աչքերը բռնեց։ Տղեն քշեց գնաց. մոտա-
ցավ, թուրը քաշեց, կայծակի թրով մի անգամ տվեց՝ օխտը գլուխն
էլ կտրեց։ Ու դրան թողին ծովի մեջն ու էկան։ էկան հասան Կար-
միր ծովին։ Կարմիր դեը շատ կատաղած էր, քառասուն գլխանի

էր, ըտրանց տեհավ, քշեց վրնները, որ ամեքին էլ ուտի: Մոտացավ, տեհավ որ Սիպտակ դէին բերում են՝ դառավ, որ փախնի: Ըտրա փախնելուց ծովի տակից ավազ էր դուրս գալի: Շատ փախավ, քիչ՝ Լեյլոն թռավ դէի մեջքի վրա կայնեց, տղեն կայծակի թուրը քաշեց, մի տալովը քառասուն գլուխն էլ կտրեց: Նորից տղեն վեկալավ Սպիտակ դէին բերեց ծովի գրաղը, Լեյլոյին բրախեց՝ գնաց, իսկ ինքը դէին բերեց:

Խաբարը տանք թաքավորից: Թաքավորը, որ իմացավ տգի դե-
վին բերելը, սկսեց հնարքներ գտնել: Պառավներ թոփ արեց իրա-
տունը ու մեկին սովորեցրեց, որ Սամի գլուխը քալաք հանի: Սամը
մոտեցավ քաղաքին:

Խաբարը տանք Սամի մորից: Սամի մերը հալվա էր շինում,
բիրդան ասեց. «Ա՛խ, երանի Սամը ըստեղ ըլեր՝ էս հալվից էն էլ
ուտեր»: Դու արի տես որ ըտրանց շոքի դափաղները հանած արար
ունեին, մի տարվա ճամփեն մի օր էր էթըմ: Արաբը ասեց.— Ես
կտանեմ հալվին:

Սամի մերը հալվին սարքեց տվեց արաբին, արաբը վեկալավ
ու գնաց: էն տեղը հասավ, որ Սամը նոր հասնըմ էր քաղաքի մեջ-
տեղը: Տարավ հալվին դրեց Սամի աղաքը:

Սամն ու արաբը ուտըմ են ու խոսըմ, մեկ էլ տեհան մի պա-
ռավ, փեշի տուտը բաց թողաց, հացի փշուր-մշուր թափեց.— Վա՛յ,
ասեց պառավը,— թաքավորի մեռլի փայը կտրվեր:

Սամը որ լսեց, հարցրեց.— Պառա՛վ, ի՞նչ մեռել:

— Բա՛, բալա շա՛ն, թաքավորի ախլիկը էրեգ մեռավ, ըսօր
ընտրա պատարագն էր:

«Վա՛յ», արավ Սամն ու դառավ մի շեյրան ընկավ սարերը:
Շատ ման էկավ սարերը, քիչ՝ խաբարը տանք արաբից: Արաբը
դէին բաց թողուց, դէր դառավ փախավ. որ շէր ֆնշացնը՛մ, թա-
քավորի քաղաքի մի մահլեն տակով արեց: Ու արաբը նորից ընկավ
Սամի հետեից: Շատ ման եկավ, քիչ՝ էկավ մի ախսլրի վրա նստեց,
տեհավ որ Սամը էկավ ետ ախսլրից հեռու կայնավ ու ասեց. «Ա՛խ,
իմ յարը, վա՛խ, իմ յարը»: Արաբը վազեց քաղաքը, հարցրեց իմա-
ցավ որ ախլիկը սաղ ա, վազեց էկավ որ Սամին ասի, էկավ տեհավ,
որ Սամը ըտեղ կայնած ա: Արաբը մտավ մի քարի տակ, տեհավ
Սամը ասեց. «Ա՛խ, իմ յարը, վա՛խ, իմ յարը»: Ըտեղ արաբը
ասեց.— Սա՛մ, արի քու յարը սաղ ա, սա՛ղ:

էտ ասելուն պես, Սամը դառավ մի ծերունի մարդ ու էկավ
արաբի կուշտը կայնավ: Մեկ էլ տեհավ աղունիկը էկավ ծառի
գլխին, էլի ասեց.— Սա՛մ, հմի առնըմ ե՞ս:

Աղոնիկը խղճահարված գնաց էտ նկարի տիրոջը վեկալավ
բերեց, վեր էկան ախարի վրա, իրանց բմբուլներից մեկը հանին,
թաթիսին ջրի մեջը, քսին Սամի աչքերին, հետո ջեբներից հանին
անմահական ջրի ջուշեն, մի կաթ կաթացրին Սամի բերանը, Սամը
ջահելացավ, դառավ տասնօխտը տարեկան: Նորից առանց թաթա-
վորին իմացնելու, վեկացան Սամը, արաբը, թաթավորի էրկու ախ-
շիկը դնացին Սամի հոր երկիրը:

Սամը ձիով էր էթըմ, արաբը ոտով, ախշիկերը բրկնքովն ին-
թրոնրմ: Էկան հասան թաթավորի քաղաքը: Թաթավորը, որ տեհավ
իրան տղի դալը, շատ ուրախացավ ու բերեց օխտը օր, օխտը քշեր:
հարսանիք արեց: Թաթավորը մեռավ: Սամին դրին թաթավոր:
Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:
Երկնքիցը օխտը խնձոր վեր էկավ: մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին,
մնացողն էլ՝ բոլոր լսողներին: Մի հատ էլ բուլու շլինք վեր էկավ,
էն էլ՝ Մանուկանց Մովընին:

